ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.07.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2020/159

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 17.07.2020թ. թիվ 26/26-1/10709-2020 գրությամբ «Գասպարյան Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 10.07.2020թ. թիվ 01/61-12028 գրության հիման վրա, 17.07.2020թ. թիվ 26/26-1/10709-2020 գրությամբ նախաձեռնել է «Գասպարյան Շին» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Գասպարյան Շին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Գասպարյան Շին» ՍՊԸ-ի կողմից, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ, գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/159 ընթացակարգի շրջանակներում 27.07.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 10.07.2020թ. թիվ 01/61-12028 գրությամբ հայտնել է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/52» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի շրջանակներում «Գասպարյան Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ՝ բացակայել է հայտի ապահովումը:

Գնահատող հանձնաժողովը օրենքով սահմանված կարգով մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը, իսկ գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացրել է Ընկերությանը՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, սակայն սահմանված ժամկետում Ընկերության կողմից անհամապատասխանությունը չի շտկվել:

Ամփոփելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետով՝ Պատվիրատուն առաջարկել է Ընկերության նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/159 ընթացակարգի շրջանակներում 27.07.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/159 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/159 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի վարչական շենքի ջեռուցման համակարգի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/52» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Գասպարյան Շին» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.07.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության 3.1 կետի համաձայն՝ «Գասպարյան Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է անհամապատասխանություն՝ բացակայում է հայտի ապահովումը:

3. Նույն արձանագրության 3.2 կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել նիստը մեկ օրով կասեցնելու և մասնակցին ծանուցելու մասին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.07.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ արձանագրված անհամապատասխանությունը «Գասպարյան Շին» ՍՊԸ-ի կողմից չի շտկվել և վերջինիս հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:

5. <u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 17.07.2020թ. թիվ 26/26-1/10709-2020 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 10.07.2020թ. թիվ 01/61-12028 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված***

պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի ե) պարբերության համաձայն՝ ***հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում:*** Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Ընթացակարգի հրավերի 4-րդ մասի 4.3 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ ***մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով:*** Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ մասնակիցը դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Այսպես, Երևանի քաղաքապետարանի կողմից իր կարիքների համար Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի վարչական շենքի ջեռուցման համակարգի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/52» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Գասպարյան Շին» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.07.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության 3.1 կետի համաձայն՝ «Գասպարյան Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է անհամապատասխանություն՝ բացակայում է հայտի ապահովումը:

Նույն արձանագրության 3.2 կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել նիստը մեկ օրով կասեցնելու և մասնակցին ծանուցելու

մասին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.07.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ արձանագրված անհամապատասխանությունը «Գասպարյան Շին» ՍՊԸ-ի կողմից չի շտկվել և վերջինիս հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանվում է, հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Նույն կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին:

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:***

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի, Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի ե) պարբերության և Հրավերի 4-րդ մասի 4.3 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որը Ընկերության կողմից չի ներկայացվել, միևնույն ժամանակ Ընկերությունը ծանուցվել է նշված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, սակայն սահմանված ժամկետում չի շտկել, այսինքն՝ «Գասպարյան Շին» ՍՊԸ-ն «ԵՔ-

ԳՀԱՇՁԲ-20/52» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 17.07.2020թ. թիվ 26/26-1/10709-2020 գրությամբ «Գասպարյան Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Գասպարյան Շին» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**